Մկրտիչ Արմեն

Հեղնար աղբյուր

Գլուխ չորրորդ

Գլուխ չորրորդ

1

Ոսկերիչ Վաղինակի տղան՝ Վարոսը, քանդեց օձիքի կոճակները և շարունակեց քայլել: Անասելի տոթը շնչահեղձ էր անում նրան, և նա չէր կարողանում որոշել դրսո՞ւմն էր այդ տոթը, թե՞ ներսում: Շափխայի տակից նրա ճակատին թափված մազերը փոշեկալել էին և գորշացել: Նրա աչքերը հոգնել էին և կորցրել իրենց հանդուգն, կանանց շփոթեցնող արտահայտությունը: Որոնող հայացքով նա անդադար շուրջն էր նայում, բայց ոչինչ չէր տեսնում: Մի անգամ միայն նա կանգ առավ, սթափվեց, փորձեց որոշել իր որտեղ լինելը: Նրա երկու կողմերում Գյումրու միհարկանի տներն էին՝ սև ու նարնջագույն տուֆաքարերից, կամարապատ դարպասներով, դռներով և լուսամուտներով: Փողոցը լուռ էր ու խաղաղ, այնտեղ ոչ ոք չկար: Այդ անդորրության մեջ առավել անտանելի էր Վարոսի համար իր խռովահույզ վիճակը:

Ի՞նչ անել, ի՞նչ անել . . .

Ահա Թաթոս հորեղբոր տունն աջ կողմում: Չմտնե՞լ արդյոք այնտեղ, չխոսե՞լ հորեղբոր կնոջ հետ, չպատմե՞լ նրան այն, ինչ չի պատմել դեռ ոչ ոքի . . . Բայց ինչո՞ւ պատմել, ի՞նչ կփոխվի դրանից . . .

Գուցե մտնել Փալանջո՞նց մոտ . . . Ահա նրանց տունը ձախ կողմում: Եթե Վարոսը մտնի այնտեղ, Փալանջոնց ողջ ընտանիքը դուրս պիտի վազի նրան ընդառաջ, Գոհարը պիտի ամաչի, բայց և հայացքը չխոնարհելով, պիտի ժպտա և աչքով անի խոստմնալից: Ընտանիքն ուզում է, որ Վարոսն իրենց փեսա դառնա, իսկ Գոհարը սիրում է նրան: Ինչո՞ւ է սիրում . . . Ո՞ւմ է պետք . . . Կամ գուցե մտնել ա՞յս տունը . . . Վարոսը չի հիշում, կամ չգիտե, թե ում տունն է դա, բայց նրան հարկավոր է ընդամենը մի թաս ջուր խնդրել իր տոթ հոգու համար: Իսկ ինչո՞ւ խնդրել, ի՞նչ պիտի օգնի ջուրը . . .

Վարոսը հուսահատորեն ձեռքը տարավ դեպի օձիքը՝ քանդելու համար, բայց այն արդեն քանդված էր մինչև վերջին կոճակը: Իսկ ինչո՞ւ էր ուրեմն այդպես տոթ, չէ՞ որ դեռ լրիվ կեսօր էլ չկար . . .

Նա շոշափեց վիզը, կուրծքը, ապա ձեռքը տարավ ծոցը: Չհարբե՞լ արդդյոք . . . Չգնա՞լ արդյոք այդպես հարբած, հասնել իր սիրո և մեղքի դռանը և դառնորեն լաց լինել դրա շեմքի վրա . . .

Վարոսը ծանր հառաչեց և շարունակեց քայլել: Նրա երկու կողմերում, լուռ և փակ, կանգնել էին միհարկանի տները: Տափակ կտուրներից հորիզոնական դիրքով դեպի փողոց էին երկարվել մուգ-կարմիր ներկված թիթեղե ջրհորդանները: Դրանց ծայրերը մի արմունկով կախված էին վար՝ երկարավիզ ինչ-որ կենդանու գլուխների պես: Առավել նմանության համար այդ վար թեքված գլուխներն իրենց վրա ունեին աքաղաղի ատամնավոր կատարներ, իսկ բերանների երկու կողքերին՝ ատամնավոր ճեղքեր՝ շան ժանիքների նման: Ձիու վզով, աքաղաղի կատարով և շան ժանիքներով այդ կենդանիներն իրենց թիթեղե կիսաբաց բերաններով կարծես ծիծաղում էին վերևից Վարոսի վրա, ծաղրում էին նրան:

Ավելի շուտ անզգայաբար, քան գիտակցաբար, Վարոսը բաց արեց մոտակա դարպասի դռնակը և մտավ բակ: Արևի պայծառ լույսի մեջ, գունաթափված ամրապինդ գետնի վրա, կտուցներով կեր էին որոնում հավերը: Բակում ոչ ոք չկար:

Վարոսը մոտեցավ բնակարանի դռանը՝ ջուր խնդրելու: Դուռը բաց էր, բայց շեմքի վրա, մարդու կես բարձրությամբ, կախված էր կարմիր ճաղերով դռնակը, որպեսզի հավերը չմտնեն բնակարան: Բաց էին նաև երկու լուսամուտները՝ դռան մի կողմում:

Մայրի՛կ, ձայն տվեց Վարոսը:

Ոչ ոք դուրս չեկավ: Ըստ երևույթին բնակիչները գտնվում էին փողոցի կողմի սենյակներում:

Վարոսը գնաց դեպի ջրհորը՝ լերկ բակի կենտրոնում: Դույլը, որ կապված էր ճախարակի վրա փաթաթված երկար պարանից, թողեց ջրհորի մեջ, ապա վեր քաշեց:

Ճախարակի ճռինչի վրա մի հասակավոր մարդ դուրս ելավ բակ: Վարոսը չնկատեց նրան և դույլը մոտեցրեց շրթունքներին: Ջրից բուրեց հորի խոնավությունը: Ջրի վրա Վարոսը տեսավ իր հոգնած դեմքը, նայեց իր խամրած աչքերին և առանց խմելու, դույլը դրեց ջրհորի բերանաքարի եզրին: Նրա կողքին կանգնած էր տանտերը:

Ընչի՞ չխմեցիր, ախպոր մանչ:

Ծարավ չեմ, հորեխպայր:

Ըպը մեր հայաթն ի՞նչ գործ ունիս,— կասկածանքով ժպտաց տանտերը:

— Գող չեմ, հորեխպայր, ես օսկերիչ Վաղինակի տղեն եմ:

— Օսկերիչ Վաղինակի տղե՞ն . . .

Տանտերն ուրախացած բռնեց նրա թևից:

— Նես արի, ախպոր մանչ, ռախին ջրից լավ է:

Չէ, շնորակալ եմ, հրաժարվեց Վարոսը, ջուրն օր չմարեց՝ ռախին հեչ չի մարե . . .

Նա գնաց, իսկ տանտերը տարակուսանքով մի պահ նրա ետևից նայելուց հետո մտավ ներս:

Երբ Վարոսը ելավ փողոց և անցավ այդ տան լուսամուտների մոտով, լուսամուտներից մեկն շտապ շառաչով բացվեց և մի ջահել ու գեղեցիկ աղջիկ հատուկ հայացքով նայեց նրան: Վարոսը հասկացավ, որ տանտերը ենթադրել էր, թե տղան սիրում էր իր աղջկան, և տխուր ժպտաց:

2

Վարոսը դուրս ելավ դեպի քաղաքի բարձրում փռված դաշտը, որ հարթ և արձակ գնում էր մինչև դիմացի ոչ այնքան հեռակա սարերը: Վարոսի ձախ կողմում տեսարանը սահմանափակում էին ռազմամթերքների պահեստները, որոնց ետևում Չերքեզի Ձոր կոչված զբոսանքի ձորակն էր: Ձորակի ետևում, երկարաձիգ բլուրի վրա, գտնվում էր նույնքան երկարաձիգ բերդը: Բերդի ետևում, հովիտով հոսում էր Ախուրյանը:

Վարոսի աջ կողմում տեսարանը սահմանափակում էր Ռանչպարների մահլա թաղամասը՝ գյուղատիպ տներով, որոնց ետևում Ձորի Բողազն էր: Դրա ետևում, հարթ տարածության վրա, գտնվում էր քաղաքի ամենահոչակավոր զբոսավայրը՝ Ձիթողցոնց Զաբորը: Զբոսավայրի ետևում, դրանից բավական հեռու, կայարանն էր:

Թե Չերքեզի Ձորը և թե Ձորի Բողազը քաղաքի այդ վերին մասում կտրուկ ընդհատվում էին դիք պատերի պես, իսկ դաշտով հոսող երկու փոքրիկ ջրերը փոքրիկ ջրվեժներով թափվում էին այդ պատերն ի վար:

Նայելով դիմացի արձակ տարածությանը: Վարոսը մի պահ շունչ քաշեց ազատ և խորը: Նրան այնպես թվաց, թե այդ տեսարանի լայնարձակությունն ու հովը շոյեցին իր այրվող դեմքը: Սակայն, դեռ հազիվ հարյուր քայլ արած, նա զգաց, թե ինչպես նույն հեղձուկը դարձյալ խեղդում է իրեն, և չեն օգնում ոչ դաշտերը, ոչ սարերը: Չվերադառնա՞լ արդյոք . . .

Նա նայեց ետ՝ քաղաքին: Նրա ոտքերի մոտից, աննկատելի վայրէջքով, փռվել-տարածվել էր քաղաքը՝ իր ոչ խոր և ափսեաձև ցածրավայրում: Ընդհանուր գորշ պանորամայի միջից այստեղ ու այնտեղ վեր էին խոյացել սևաքար ու կարմրաքար եկեղեցիների սրածայր գմբեթները՝ արևի տակ պայծառ ու հավասար փայլող խաչերով: Իսկ քաղաքի մյուս ծայրում, հեռո՛ւ, հեռո՛ւ, թուրքական թաղամասն էր՝ բլուրի վրա:

Օ՛օ՛օ՛ֆ . . . — մռնչաց Վարոսը՝ ոչ իր ձայնով և երեսը դարձրեց քաղաքից: Նրան անտանելի էր նայել քաղաքին: Մեկն այնտեղ մեղավոր է իր սիրած կնոջ մահվան մեջ: Եթե Վարոսը գտնի նրան, ապա կհոշոտի մերկ ձեռքերով: Բայց այն է ամենածանրը, որ չի կարող գտնել . . . Ո՞վ է նա: Ուստա Մկրտի՞չը . . . Բայց ուստա Մկրտիչը ոչ միայն չի սպանել Հեղնարին, այլև շիրմաքար է պատրաստում նրա համար; Կամ գուցե Վարոսն ի՞նքն է մեղավոր . . .

Վարոսի սիրտը, որի փեղկերը փակ էին խանութի փեղկերի նման, ցնցվեց: Մի միտք, ներսում մնացած կատվի պես, չանգռեց փեղկերը: Միայն մի վայրկյան տևեց այդ անհեթեթ միտքը, թե Վարոսն ինքն էր մեղավոր Հեղնարի մահվան մեջ . . .

Ճիշտ է, տեսնելով ուստա Մկրտչին, Վարոսը փախավ թուրքական թաղամասից, բայց փախավ նրա համար, որպեսզի ուստան, որ չգիտես ինչ գործով էր եկել թուրքական թաղամաս, չտեսներ նրան, չհարցուփորձեր, թե ինչու է նա նույնպես եկել այդտեղ:

Վարոսը երկար սպասեց բոստանների միջով անցնող ճանապարհի անմարդ մի ոլորում՝ մինչև ուստան վերադառնար, որպեսզի նա գնար թուրքական թաղամաս: Եվ հանկարծ նա տեսավ սանձակոտոր կառքը և կառքի մեջ՝ ուստայի մորը . . . Ապա ճանապարհը լիք-լցվեց դեպի թուրքական թաղամաս շտապող տագնապահար կառքերով ու մարդկանցով . . .

Վարոսը համարյա ամեն ինչ հասկացավ: Խելագարի պես ինքն էլ սկսեց վազել դեպի աղետի վայրը, բայց հանկարծ կանգ առավ: Ինչո՞ւ է գնում . . . Բաց անելու համա՞ր, որ ինքն է Հեղնարի սիրեկանը . . . Ոչ, ոչ ոք չպետք է իմանա, որ անառակի անուն հանած այդ երիտասարդի համար է Հեղնարն արատավորել

ուստայի անկողինը: Թող բոլորն այնպես կարծեն, թե կինն այդ արել է ուստայից ավելի արժանավոր մի մարդու համար . . . Գուցե այդպիսով մի քիչ պակաս լինի այն ցեխը, որ պիտի շպրտի քաղաքը Վարոսի սիրած կնոջ շիրիմի վրա . . .

Եվ Վարոսը վերադարձավ՝ խելագարի նման թափառելու համար քաղաքում և դաշտերում՝ մինչև այսօր . . .

Իսկ գուցե ողջ քաղա՞քն է մեղավոր Հեղնարի մահվան մեջ՝ իր օրենքներով, ադաթով, ողջ քաղա՞քը, որը մեղադրում է Հեղնարին ու նրա սիրեկանին . . . Իսկ ինչո՞ւ է մեղադրում, սիրո համա՞ր: Ո՞վ ասաց, թե սերը մեղք է, ո՞վ է գրել այդ օրենքը . . .

Եթե այդպես է, ուրեմն ավելի լավ չէ՞ թողնել-հեռանալ Գյումրիից, փնտրել այնպիսի մի աշխարհ, որտեղ, ո՞վ գիտե, ընտանիքի պատիվն էլ է մաքուր, սերն էլ է սուրբ . . .

Վարոսը ցնցվեց: Հեռանալու միտքը հանկարծակի լույսով լվաց նրա սրտի խավարը: Իրոք որ, թողնել, հեռանալ . . . Ի՞նչ ունի ափսոսալու նա Գյումրիում . . .

Բայց Վարոսի մտքերը կտրուկ կանգ առան: Ձորի Բողազը . . . Չէ՞ որ դա իր աշխարհն էր: Նա այդտեղ էր ծնվել ու մեծացել, այդտեղ էր սիրել իր դժբախտ սիրով . . . Ինչպե՞ս հեռանալ Ձորի Բողազից . . . Իսկ հեռանալ՝ հարկավոր է, հարկավոր է հենց այսօր, հենց հիմա: Անտանելի է ապրել Գյումրիում: Այնտեղ ամեն ինչ Հեղնարին է հիշեցնում, իսկ Հեղնարն այլևս չկա և չի լինի երբեք . . .

Հարկավոր է վերջին անգամ տեսնել Ձորի Բողազը և թողնել-հեռանալ ընդմիշտ . . .

3

Ձորի Բողազ գնալու համար Վարոսը թեքվեց աջ՝ դեպի Ռանչպարների թաղամասը: Նրա կողքերով անցան անտաշ լեռ քարե տներ՝ կտուրների վրա հոտավետ խոտի դեզերով, կալեր՝ գոտկաչափ բարձրությամբ պատերով և պինդ

ու ողորկ գետնով: Անցան կանաչ բացատներում արածող հատուկենտ ուլեր և կառապանների բխված ձիեր, որ գլուխներն էին թափահարում:

Եվ հանկարծ, անսպասելիորեն, թաղամասը կտրուկ ընդհատվեց, կարծես գետինը միանգամից ճեղքվեց, և Վարոսի անմիջապես ոտքերի տակ, ցածրում, բացվեց Ձորի Բողազը . . . Այս լանջի վրա՝ իրարից ցածր, և այն լանջի վրա՝ իրարից բարձր, տարածված էին տափակ կտուրներ, անպարիսպ բակեր, փողոցներ, կանգնած էին բարդիներ . . . Ամենից ներքևում, հալված, բայց սառն արծաթի պես, հոսում էր ջուրը:

Ուստա Մկրտչի տունը մյուս ափի վրա էր՝ ուղիղ դիմացը: Լուսամուտները փակ էին, դուռը փակ էր, փակ էր նույնիսկ ջրհորի բերանը: Տան առջևի անպարիսպ բակում ևս ոչ ոք չէր երևում: Բայց հանկարծ Վարոսը նկատեց ծառերից մեկի ստվերում նստած ուստայի մորը, որ գրկել էր թոռանը՝ փոքրիկ Գալուստին, և անշարժացել:

Իսկ շուրջը՝ Ձորի Բողազն էր, որտեղ մի գարնանային օր սկսվել էր Վարոսի և Հեղնարի սերը . . .

. . . Ձորի Բողազում գարուն էր: Ձյունը հալչում էր և արևն արդեն հաճելի տաքացնում էր մարդկանց մեջքերը: Ամեն ինչ թաց էր: Գալիս էր թարմ ու դուրեկան խոնավության բույրը: Ձորի լանջերն ի վար հոսում էին ջրի մանրիկ շերտեր՝ կարծես ոլորվելով կամ հյուսվելով: Ջրերը կլկլում էին տարբեր հնչյուններով և հարափոփոխ փայլփլում էին արևից: Ձորով հոսող գետակն առատաջուր էր, սառը և վճիտ: Գետինն ամեն տեղ խոնավ էր, մուգ ու փափուկ, այնտեղից բարձրանում էր թանձր գոլորշի, որը սակայն, տեղ-տեղ արդեն նոսրանում էր, իսկ հողը՝ գունաթափվում և ամրանում:

Երկինքը կապույտ էր՝ արտասովոր հստակ և համահավասար կապույտով: Ձմեռվա ընթացքում արևի վրա քաշված փառը միանգամից վերացել էր և առարկաներն այժմ նորից գտնվում էին վճիտ ու շեշտակի լույսի մեջ, երևում էին հստակ ու որոշակի մանրամասնություններով:

Դռները և լուսամուտները բաց էին: Տները դատարկվել էին, բոլոր մարդիկ և բոլոր իրերը գտնվում էին դրսում: Արդեն բոլորովին չորացած տափակ կտուրների վրա կամ բակերում՝ բնակարանների արևոտ պատերի տակ, դրված էին արևի երես հանված գույնզգույն ներքնակներ, վերմակներ, գորգեր, կարպետներ, ջեջիմներ, ձյունափայլ սպիտակ բարձեր . . . Ծառից ծառ կապված պարանների վրա, դուրս հանված աթոռների թիկնակների վրա, կախված և փռված էին վերարկուներ, արդեն սնդուկ դնելու ձմեռային հագուստներ և սնդուկից հանած գարնանային զգեստներ:

Վարոսը նստել էր իրենց տան պատի տակ՝ ինչպես ամեն գարնանամուտին և նայում էր: Նա մի ձեռքը դրել էր իրենց սպիտակ գամփռի մեջքին, որի փափուկ բուրդը հաճելի տաքացել էր: Այդ տաքության մեջ ոչինչ չկար վառարանից, այդ տաքությունը գարունն էր:

Վարոսը նայում էր դեպի երկնքի անսահման կապույտը, որտեղով, ուրախ կանչերով, հայրենիք էին վերադառնում կռունկները: Կապույտ անսահմանությունից լսվում էր նրանց հրաշալի, բարեգուշակ կանչը: Ներքևում ամեն տեղ, երեսները դեպի երկինք բարձրացրած, երեխաներն աղմկում էին կռունկների մասին, իսկ մի տան արևկող պատի տակ նստած մի ծերունի, կռունկների յուրաքանչյուր կանչին ի պատասխան, մրմնջում էր՝ ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն . . .

Վարոսի մի կողմում, պարանի վրա, երկտակ կախված էին գորգերը: Դրանց խայտաբղետ պատն արևի տակ վառվում էր խոր և փափուկ ջերմությամբ:

Հանկարծ Վարոսը ցանկություն զգաց՝ ինչպես իր մանկության գարնանամուտներին, մտնել երկտակ կախված գորգերի տակ, ականջների վրա զգալ գորգի ետնակողմի կոշտ, տաք հպումը, քայլել այդ նեղ խավարով, անցնել բոլոր գորգերի անընդհատ շարանի տակով, մինչև որ հանկարծակի վերջանային դրանք, և իր աչքերը շլանային անսպասելի արևից, երեսը միանգամից մրսեր դեռ զով օդից, իսկ գորգերի հպումից ազատված իր ականջները լսեին գարնան բոլոր ձայները՝ հազարավոր մանր ջրերի մեղմ քչքչոցը, թարմ օդի շնկշնկոցը, երեխաների բացականչությունները, ուրախ զզուզ անող երկու շնիկների իբր թե իրար վրա բարկացած մռմռոցը, ձմեռվա

ընթացքում դրկցի հասած աղջկա զվարթ ծիծաղը . . .

Վարոսը նույնիսկ վեր ցատկեց տեղից, բայց իր հասակից շփոթված, նորից նստեց: Նա այլևս չէր տեղավորվի պարանի տակ, իսկ մի քանի գորգերի տաք և մութ միջանցքն այլևս չէր թվա նրան երկար . . .

Քիչ հետո Վարոսը վեր կացավ, կտրեց-իջավ մի քանի փողոց և սկսեց քայլել տների առջևով՝ գարնան բացվելուց հիացած: Նա առանց պատճառի ժպտում էր: Նա նայում էր պատերի տակ արևկող անող, բայց ոչ նիրհող, այլ բավականությամբ տաքացող շներին, ապա հորդառատ դարձած գետակի խշխշան ջրերին, և ոչինչ չէր մտածում: Նա իրեն զգում էր անհավատալի թեթև, ոչ մի հագուստ չէր զգում իր վրա: Եվ նա բոլորովին չէր աշխատում ոտքերը փոխել, դրանք շարժվում էին իրենք իրենց: Նրա կուրծքը դադարել էր ելնել-իջնելուց, օդն ինքն իրեն էր ներս ու դուրս անում նրա ռունգներով: Իր թեթևությունի՞ց էր, թե հողի փափկությունից, նա ոտքերի տակ գետինը չէր զգում:

Նույն րոպեին, երբ նա անցնում էր ուստա Մկրտչի տան առջևով, դուռը բացվեց, և Հեղնարը, մի ներքնակ գրկած, դուրս եկավ այնտեղից, ներքնակի ետևում կնոջ դեմքը չէր երևում: Բայց երբ նա ներքնակը փռեց պատի տակ դրված նստելու քարերի վրա և ետ դարձավ՝ Վարոսը կանգ առավ ապշած ու հիացած:

Ո՞վ էր այդ գեղեցկուհին . . . Մի՞թե ուստա Մկրտչի կինը . . . Բայց ինչպե՞ս էր եղել, որ Վարոսը մինչ այդ չէր նկատել նրան . . . Մի՞թե կարող էր պատահել, որ երբեք տեսած չլիներ . . . Անհնար էր . . . Ոչ, տեսել էր Վարոսը, Բայց կույր էր եղել՝ դեռ արբունքի չհասած տղայի կուրությամբ . . .

Կինը նկատեց տղային, ժպտաց և հարցրեց .

— Ի՞նչ կուզես, Վարոս:

— Դուն ընձի գիտե՞ս, զարմացած ուրախացավ Վարոսը:

— Օսկերիչ Վաղինակի էրեխեն չե՞ս:

Վարոսը մահացու վիրավորվեց և մարտահրավեր հանդգնությամբ պատասխանեց .

— Վաղինակինն եմ, հմը երեխա չեմ . . . Ծոցս կառնեմ՝ կիմանաս . . .

Վարոսի խոսքերից և աչքերի սանձարձակ արտահայտությունից կինը կարմրեց, շփոթված ժպտաց, կծեց շրթունքը և արագ մտավ ներս:

Վարոսը հեռացավ: Նա զղջաց իր հանդուգն պատասխանի համար, թեև պատանեկան ինքնասիրությամբ շարունակում էր համոզել իրեն, որ լավ վարվեց: Նա քայլում էր Ձորի Բողազի սքանչելի գարնան միջով և նրա հայացքի առաջ Հեղնարի աչքերն էին՝ խոշոր, սև և շփոթված: Նա այժմ հարբածի նման էր, գարունն ու Հեղնարը լցվել էին նրա էության մեջ և նա չգիտեր որն էր գարունը և որն էր Հեղնարը: Իր հանդուգն պատասխանի համար նա պատժված էր, նա անհույս սիրով սիրահարվել էր ուրիշի կնոջ . . .

Սիրո՞ւմ էր Հեղնարն իր ամուսնուն, թե ոչ, կապվա՞ծ էր նրա հետ հոգեկան մտերմությամբ, թե՞ տանում էր իր ակամա ամուսնության լուծը՝ Վարոսը չգիտեր: Համենայն դեպս, Հեղնարը Ձորի Բողազի ամենապարկեշտ կանանցից մեկն էր, որի գովեստը հաճախ էր լսել Վարոսը դեռ իր մանկությունից սկսած . . . Հույս ունենալ այդ կնոջ թեկուզև բարյացակամ վերաբերմունքի վրա անհնար էր, մանավանդ Վարոսի տված հանդուգն պատասխանից հետո:

Նույն օրը, կեսօրից հետո, Հեղնարը մտավ նրանց խանութը: Ներսում միայն Վարոսն էր: Նա նկատեց, որ կինը հագել էր դրսի հագուստ, և նրան թվաց, թե ավելի բնական կլիներ, եթե նա գար տնական հագուստով, քանի որ տունը հեռու չէր:

Վարոսը վեր ցատկեց տեղից և մոտեցավ նրան: Հեղնարը գիտեր, որ Վարոսն առևտրով չի զբաղվում, ուստի և նայելով շուրջը, հարցրեց,

— Ո՞ւր է մերդ . . .

Վարոսին նորից թվաց, թե Հեղնարը պատրվակով էր եկել, թեև հնարավոր էր նաև, որ այդպես չէր, որովհետև ողջ Ձորի Բողազը նրանց խանութից էր

գնումներ կատարում: Վարոսը ժպտաց, բռնեց կնոջ ձեռքը և ամուր սեղմելով, նայեց նրա աչքերին և աչքով արեց:

— Ի՞նչ կուզես, սալախանա՛, շնչասպառ շշնջաց Հեղնարը:

— Վարդ կուզեմ գարնանը հմար . . .

Հանկարծ Հեղնարը նայեց տղային չափազանց քնքուշ և ձգվեց դեպի նա, բայց իսկույն ետ ընկրկեց և սարսափած գնաց դեպի դուռը:

— Էգվան էս ժամանակ արի թուրքի մայլի ճամբու վրա, ազիզ, շշնջաց Վարոսը, ես լավ բան մտածեցի . . .

Հեղնարը դուրս նետվեց խանութից և արագ քայլեց հեռու, կարծես Վարոսի խոսքերը հետապնդում էին նրան: Նա սարսափով հիշեց, որ հետևյալ օրը, կիրակի, նա իրոք, պետք է անցներ բոստանների ճանապարհով՝ թուրքական թաղամասի մոտով գնալու համար գեպի գերեզմանոց, որտեղ թաղված էր տասնութ տարի առաջ ծնված և նույն տարին մեռած իր առջնեկը: Տասնութ տարի շարունակ, նա ամեն կիրակի գնում էր այնտեղ արտասվելու, և եթե այս անգամ չգնար, դա անախորժ տպավորություն պիտի թողներ ամուսնու և մանավանդ ամուսնու մոր վրա . . .

Եվ ահա, թուրքական թաղամասում սենյակ վարձելուց հետո, կիրակի օրերը Վարոսը նստում էր իրենց խանութում և անհամբերությունից այրվելով, նայում էր դեպի փողոց: Վերջապես երևում էր Հեղնարը և անցնում:

Իսկ հետո, երբ նրանք զգացին, որ այդ կերպ նրանց կարող են նկատել, Վարոսն սկսեց Հեղնարին սպասել թուրքական թաղամաս տանող փողոցներից մեկի մԻ դայֆախանայում:

Վարոսը հիշեց այն խաղաղ, մենավոր բնակարանը, որտեղ նրանց սերն էր ծաղկում: Նա շրթունքները հպում էր սիրած կնոջ ձյունային սպիտակ պարանոցին և երեխայի պես զարմանում, թե ինչպե՞ս կարող էր այդպիսի սպիտակությունն ունենալ այդքան ջերմություն . . .

Ամեն օր, ամեն օր, Վարոսը պիտի հիշի այդ ամենը . . . Նրա կոպերը փակվեցին, նա օրորվեց իր կանգնած ժայռակտորի պռունգի վրա: Էլ ինչպե՞ս ապրել Գյումրիում Հեղնարից հետո . . . Հեռանալ էր հարկավոր, իսկույն, իսկույն . . .

Հարկավոր էր իջնել Ձորի Բողազ, բարձրանալ մյուս լանջով, անցնել արձակ դաշտով, հասնել Ձիթողցոնց Զաբոր զբոսավայրին, անցնել դրա մոտով, կտրել էլի մի ընդարձակ դաշտ՝ հասնելու համար կայարան . . . Արդեն որոշում ընդունած Վարոսին դա թվում էր հսկայական ճանապարհ: Իսկ նա շտապում էր փախչել քաղաքի հեղձուկից, փախչել իր մտքերից, հուշերից, վշտից, փախչել ինքն իրենից, սարսափելի և անտանելի դարձած Վարոսից . . .

Նա դանդաղաքայլ իջավ Ձորի Բողազ: Որքան իջավ՝ այնքան ավելի ձորը շրջապատեց նրան: Վերևում փռված աշխարհը դադարեց նրա համար գոյություն ունենալուց:

Կտրելով փողոց-փողոցի ետևից, քիչ հետո նա արդեն ձորի ներքևումն էր, ուղղակի ջրափին: Օրորվելով ջրի մեջ շարած ողորկ, կլոր քարերի վրա, նա անցավ առվակը: Կանգ առավ, նայեց շուրջը: Ձորը կարծես բռնեց նրա կոկորդից: Շնչահեղձի նման նա սկսեց արագ-արագ շնչել, նրա կուրծքը սեղմվեց մի ծանր ճնշումով և մնաց այդպես: Տագնապած Վարոսն սկսեց շտապ բարձրանալ մյուս լանջով՝ շուտ ազատվելու համար այդ խեղդուկից:

Բարձրանալով դաշտ, նա կանգ առավ մի պահ: Շուռ եկավ, անհագ ու տանջալի հայացքով մի վերջին անգամ նայեց Ձորի Բողազին և աչքերն ամուր փակեց՝ կարծես այնտեղ պահելու և իր հետ տանելու համար իր աշխարհի պատկերը: Եվ երբ նորից շուռ եկավ դեպի դաշտ և աչքերը բացեց, նրան թվաց, թե Ձորի Բողազն արդեն այնքա՛ն հեռու էր իրենից . . . Դաշտը նրան թվաց անսահմանորեն մեծ և անծանոթ: Նա քայլեց՝ խորասուզվելով հանգստաբեր մոռացության մեջ:

Արևն իջավ հեռավոր կապույտ սարերի ուսին: Վարոսի վրա ընկավ այնպիսի մի լույս, որ կարծես կարոտ լիներ և թախիծ: Հորիզոնական ճառագայթների տակ փռված դաշտը դարձավ ավելի անծանոթ: Ուշացածի շտապ սլացքով մոտեցավ,

անցավ, գնաց քամին, որ կարծես թափառական երգասաց լիներ՝ արևի մահը եղերգող:

Արահետը, որ անցնում էր վերջալույսից խամրած դեղին հասկերի տաք ծովի միջով, նեղ էր ու ոլորապտույտ: Արտն ամեն կողմից ընդհուպ շրջապատել էր Վարոսին: Քայլելիս նա դիպչում էր հասկերին, որոնք խշշում էին արդեն լիքն ու հասուն:

Ամբողջ արտի համահավասար մակերեսի վրա, որն այժմ ժանգագույն էր երևում իջնող մթության մեջ, տեղ-տեղ երևում էին այդ մակերեսից վերև բարձրացած միայնակ ցողուններ: Արևն ընկել էր դրանց հասկերի վրա, որոնք շլացուցիչ պայծառությամբ վառվում էին կիսախավարի մեջ՝ ինչպես Հեղնարի հոգու փրկության համար վառված բարակ մոմեր: Հեռո՞ւ էին դրանք, թե մոտիկ՝ դժվար էր ասել: Երբեմն ամենահեռու թվացող մի հասկ հանկարծակի հայտնվում էր Վարոսի հենց կողքին կամ դիմացը: Իջել էր այն պահը, երբ մարդու աչքերը շաղվում են դեռ չմեռած լույսի և դեռ չծնված խավարի խառնուրդից . . .

Վարոսն իր ճակատի վրա զգում էր հանգչող արևի վերջին լույսը: Նա քայլում էր՝ նայելով առաջ, հեռուն, այլևս չտեսնելով ոչ հասկերը, ոչ արտը: Երբ արտն ավարտվեց՝ տեղի տալով պնդացած, քարքարոտ հողին, Վարոսը չնկատեց այդ: Միայն նրա քայլերը, նեղ արահետից դուրս գալու հետևանքով, արագացան: Վարոսի ոտքերի տակով, իրար հաջորդելով, սկսեցին անցնել մերթ կոշտ հողը՝ իր վրա տափակացած ցածրիկ ու նոսր խոտով, մերթ հողի տակից դուրս պրծած տափակ ու ողորկ քարերը:

Անցնելով արագաքայլ, Վարոսն այնուամենայնիվ զգում էր հողի ու քարի հաջորդումներն իր ոտքերի տակ, զգում էր ոչ թե ըստ կարծրության, այլ թե ինչպես էին ջերմանում նրա ներբանները՝ մերթ տաք, մերթ ավելի տաք . . .

Եվ հանկարծ Վարոսը կտրուկ կանգ առավ:

Ոչ, այսօր նա չի կարող հեռանալ Գյումրիից: Ոչ այսօր, ոչ վաղը . . . Նա հիշեց . երեկ՝ ուրբաթ օրը, լրացել էր ուստայի պահանջած քառասուն օրը . . . Ինչպես լսել էր Վարոսն իր տնեցիներից, նույն օրը, թուրքական թաղամասի բոլոր

բնակիչներն ատելությամբ ու քլունգներով զինված, հիմնահատակ էին արել Հաբիբայի տունը, արմատախիլ էին արել պարտեզը, սրբել-մաքրել էին յուրաքանչյուր հետք: Եվ այժմ, կրելով աղբը հեռու, նրանք այդ տեղը հավասարեցնում, դարձնում էին հրապարակ: Հրապարակի կենտրոնում, միակ կանգուն մնացած ծառի տակ, սև վարագույրով ծածկված, թաքցված էին ավազանն ու շիրմաքարը: Վաղը՝ կիրակի, ուստան վերցնելու էր այդ ծածկոցը . . . Վարոսը Հեղնարի շիրիմին այցի կգնա կիրակի գիշեր: Մարդիկ չեն տեսնի նրան, և նա կկարողանա շիրմաքարի վրա դրոշմել իր հրաժեշտի համբույրը, որը նա, աշխարհի կամքով, չէր կարողացել դրոշմել հանգած Հեղնարի ճակատին . . . Ապա արդեն, իր հրաժեշտը տված, նա դուրս կգա Գյումրուց և ոտք կկոխի անհայտ և անիմանալի ճանապարհների վրա . . .

Տափակ քարակտորը, որի վրա պատահաբար կանգ էր առել նա, սկզբում համարյա այրում էր նրա ներբանները: Բայց այժմ Վարոսի ոտքերի տակ սառնություն էր, որից նա զգաց, որ վաղուց է կանգնած այդտեղ:

Դանդաղ քայլերով, նորից նույն արտի միջով, Վարոսը վերադարձավ դեպի Ձորի Բողազ: Երբ հասավ ձորի պռունգին ու նայեց ներքև, նա տեսավ, թե ինչպես իր շրջապատի ուշ վերջալույսի մեջ, այնտեղ, ներքևում, երկարավուն գիշերով ձգվել էր Ձորի Բողազը . . .

Դիմացի լանջի վրա, վերևից մինչև ներքև, մթության մեջ վառվում էին նավթի լապտերների մանրիկ կրակները՝ չլուսավորելով ոչինչ: Տեղ-տեղ դրանք ձգվում էին երկար շարքերով, տեղ-տեղ խռնված էին անկանոն՝ վերև, ներքև, խիտ, հատուկենտ . . . Թվում էր, թե դրանք մանրիկ կայծեր են՝ դատարկ մթության մեջ քարացած:

Իրարից շատ հեռու, բարձր այուներից կախված, վառվում էին գազի լապտերները: Մոտիկ մի լապտերի սպիտակ լույսը փոքրիկ սկավառակով լուսավորում էր փողոցի մի հատված, հայտնաբերում խավարում կորած ինչ-որ ծառի կեսը, փայլում արդեն քնած մի տան մութ ապակիների վրա, որի լուսամուտը փեղկեր չուներ: Մի այլ տան լուսամուտափեղկերի ճեղքերից երևում էին լույսի դեղնավուն երիզներ:

Իսկ այն լանջի վրա, որտեղ Վարոսն էր կանգնած, մթության մեջ հազիվ երևում էին տափակ կտուրների մի քիչ գունատ քառանկյունիները՝ ավելի և ավելի իրարից ներքև: Դրանց միջև, ավելի մեծ քառակուսիներով, երևում էին մութ բակերը: Ծառերի մուգ կերպարանքներն ամեն տեղ կտրատում էին տեսարանը:

Ձորի Բողազն էր փռված այնտեղ՝ իր քարքարոտ և ամայի սկզբից մինչև լայնատարած քաղաքը: Ինչպես մթության մի գետ, որն իր ալիքների վրա տանում է հանգչելու պատրաստ մանրիկ կայծեր, այն հոսում էր դեպի քաղաք՝ լուծվելու դրա մեջ . . .

4

Գյումրու հյուսիսում, որտեղ քաղաքի վերջին տները բարձրանում էին դեպի լայնարձակ դաշտը և այնտեղ ընդհատվում, գտնվում էր Ձիթողցոնց Զաբոր կոչվող զբոսավայրը:

Քաղաքը ներկա էր այգու շուրջը: Այգուց դեպի ձախ, բավական ընդարձակ տարածությունից այն կողմ, գտնվում էր Ձորի Բողազը, որը թեև բոլորովին չէր երևում, բայց դրա ներկայությունն զգում էին բոլորը: Ձորից այն կողմ երևում էր Ռանչպարների թաղամասը:

Այգուց դեպի աջ, ավելի ընդարձակ տարածությունից այն կողմ, երևում էր կայարանը՝ գորշ շենքերի և կանաչ ծառերի երկար շղթայով ձգված:

Այգու վերևում դաշտն էր իր դեղին արտերով, որ տարածվել էր մինչև կանաչին տվող ոչ այնքան հեռու ցածրիկ լեռնաշղթան:

Այգու ներքևում, երկու քայլի վրա՝ քաղաքն էր: Խճուղու մի կարճ և լայն կտոր այգու մոտից իջնում էր դեպի մի փողոց և միանում դրան: Այնուհետև, հեռու, շատ հեռու փռված էր քաղաքը կեսօրի արևի տակ՝ լուսամուտների պսպղացող ապակիներով, եկեղեցիների ոսկեփայլ խաչերով և նեղիրան ու բարձրահասակ բարդիների սրածայր գագաթներով . . .

Յուրաքանչյուր կիրակի, վաղ առավոտից սկսած, քաղաքի բոլոր կողմերից դեպի Ջիթողցոնց Ջաբոր էին սլանում կառքերը: Դա քաղաքի այն զբոսավայրն էր, ուր գնում էին ոչ թե խնջույք անող տղամարդիկ կամ սեր անող զույգեր, այլ ամբողջ ընտանիքներ: Կառքերում նրանք տանում էին ինքնաեռներ, թեյի և ճաշի պարագաներ, ուտելիք: Ճիշտ է, տանում էին նաև խմիչք, գնում էին նաև դաուլ-զուռնայի խմբեր և սազանդարներ, սակայն կանանց ու երեխաների ներկայությունը չափավոր և զուսպ էր դարձնում գինարբուքն այդ այգում:

Սլանալով քաղաքի բոլոր կողմերից, կառքերը դեպի այդ այգին տանող վերջին փողոցում վերածվում էին համարյա անընդհատ մի հոսանքի: Օդի մեջ կանգնում էր արևափայլ սպիտակ փոշին՝ բարձրանալով քառասմբակող ձիերի ոտքերի տակից և անիվների, որ ունեին կարմիր ներկած փայտե կամ պսպղուն նիկելե շառավիղներ: Փողոցը լցվում էր զվարթ մտրակող և իրար հետ մրցող կառապանների ուրախ կանչերով և կառքերում նստածների ծիծաղ ու զրույցով . . .

Կեսօրին մոտ համարյա դադարում էր ընտանիքներին այգի տարած և դատարկ վերադարձող կառքերի հոսանքը: Քաղաքը դատարկ էր լինում, իսկ այգում տիրում էր ուրախ բազմամարդություն . . .

Խաղաղ և գեղեցիկ ծառաստան էր այգին, դյութիչ և հիանալի վարդաստան: Բայց ծառերն այնտեղ հաստաբուն չէին և ստվերախիտ, վարդերը համատարած չէին և առատ: Ընդհակառակը, արևոտ և զվարթ էր այգին, նոսրատերև մատղաշ ծառերն այնտեղ կանգնած էին առանձին-առանձին, վարդի թփերը դրանց միջև կանգնած էին կարճ շարքերով կամ փոքրիկ խմբերով, իսկ արձակ տարածությունները ծառերի և թփերի միջև՝ ծածկված էին ցածրիկ, բայց խիտ կանաչով:

Մի փոքրիկ, գեղեցիկ տնակ կար այգու կենտրոնում՝ մեծ ծառերի ստվերով շրջապատված: Տնակի առջևում, տնակից ավելի մեծք մի քառակուսի ավազան կար, որը, կենտրոնից բխող շատրվանի փոխարեն, ուներ պռունգներից մեկի վրա կանգնած աղբյուրաքար, որի փայլուն խողովակից ջուրն արծաթապայծառ կամարով իջնում էր ավազան՝ իր անկման տեղի շուրջը գոյացնելով նեղ, հետո ավելի և ավելի լայն, բայց հետզհետե հանգչող օղակներ: Ավազանի մյուս

պռունգին, աղբյուրաքարի դիմաց, քարե մի քանի աստիճաններ իջնում էին դեպի ջուրը: Աստիճաններից ներքևինները ծածկված էին ջրով, և դրանց վրա, ջրի միջով, փայլում էին արևի խոշոր բծերը: Հետզհետե բարձրացող ջուրը թեթևակի ճոճումով ելնում-իջնում էր մի աստիճանի վրա՝ ճողփյունով ապտակելով դրա մակերեսը:

Երիտասարդներն իրենց ընկերներով, և աղջիկներն ընկերուհիներով կանգնում էին վարդի ու յասամանի թփերով, նարգիզ ու մեխակ ծաղիկներով, սուսամբարի բուրավետ տերևներով շրջապատված և ծառերի մեջ կորած այդ տնակի մոտ, արևոտ ավազանի եզրերին, և երազում էին:

Երեխաները վազվզում էին ամեն տեղ, պահմտոցիկ էին խաղում թփերի միջև:

Յուրաքանչյուր ծառի ստվերում, խոտի կամ գորգերի վրա, բարձիկներին կոթնած կամ մեջքերը բարակ ծառարներին հենած, նստում էին տղամարդիկ, կանայք: Ծառերի խայտաբղետ ստվերների մեջ բացվում էին սպիտակ սփռոցներ, որոնք իսկույն ծածկվում էին ուտելիքներով լի ափսեների, շշերի, լավաշի, կանաչու, համեմունքի տակ: Յուրաքանչյուր թփի մոտ, առանց ծխի, փայլում էին խորոված ի ածուխների կրակները, պսպղում էր արծաթագույն կամ ոսկեգույն ինքնաեռը, իսկ աղբյուրի ավազանի մեջ, զամբյուղներով, զովանում էին խմիչքի շշերը: Ամեն կողմից, հեռու և մոտ, լսվում էին դաուլ-զուռնայի ձայներ՝ զուսպ, կամացուկ, իրար չխանգարող, զբոսավայրի խաղաղ բնույթին համեմատ:

Եվ միայն այգու մի եզրին, անպատվանդան, ուղղակի գետնի վրա, դրված էր փայլուն սև մարմարից մի քառանկյունի շիրմաքար: Դրա գլխավերևում կանգնած մեծ ուռենին դրա վրա կախել էր իր ստվերը՝ կիսով չափ մթագնելով այն և իր ճյուղերն արտացոլելով դրա սև հայելու մեջ, մինչդեռ մյուս կեսի վրա տիրապետում էր ջեռ արևը:

Պայծառ խաղաղությունն արևով և ուրախությամբ փռվել էր այգու վրա: Ոչ մարդիկ, ոչ նվագարանները, ոչ աղբյուրը, ոչ ծառերը չէին արձակում ոչ մի խանգարող ձայն, ոչ մի բարձր հնչյուն: Հավիտենական խաղաղությամբ նետվել էր հավուզ-ախպուրի արծաթե անշարժ կամարը՝ խողովակից ավազան, շուրջը տարածվել էր ծաղիկների ամենամեղմ բույրը: Երբեմն, շարժելով և հազիվ լսելի խշշացնելով ծառերի սաղարթները, կեսօրի հաճելի տաք օդի միջով սահում-անցնում էր պատահական հովը:

Դաուլ-զուռնաների հանդարտասահ նվագի շուրջը հավաքված, մարդկանց խմբերը լուռ ունկնդրում էին դրանց անբարբառ պատմությունները: Այստեղ ու այնտեղ, կարծես երազի մեջ, օրորվում էր կանանց կենտապարը:

Եվ հանկարծ, այգու խաղաղ տեսիլի վրա տարածվեց հուժկու, առնական մի ձայն .

— Ալա՛ն . . . բուլա՛ն . . .

Կանգնել էր մունետիկն այգու պռունգին: Վայրկենապես բոլորի ուշադրությունը լարվեց դեպի նա: Նվագը լռեց, ընդհատվեցին բոլոր ձայները, լսելի դարձավ ծառերի զգույշ խշշոցը:

— Գնացե՛ք . . . թուրքերո՛ւ . . . թաղը . . . Տեսե՛ք . . . Հեղնար ախպուրի՛ . . . հրա՛շքը . . .

Մարվող վերջին հնչյունների հետ միասին կարծես լուծվեց նաև մունետիկի կերպարանքը: Դեռ մի պահ քարացել-մնացել էր զվարճացող կիրակնօրյա Գյումրին, ապա միանգամից լսվեցին հարյուրավոր բերաններից թռած կանչերը .

— Ֆայտո՛ն, ֆայտո՛ն, ֆայտո՛ն . . .

Փոշու խուլ ամպերի մեջ կորած, արդեն սլացան-գնացին մի քանի կառքեր, բայց հարկավոր էին ոչ թե մի քանիսը, այլ շատ, շատ: Բայց կառքերը վերադարձել էին քաղաք և միայն իրիկնադեմին պիտի գային այգի՝ գյումրեցիներին ետ տանելու համար:

Մի քանի տղամարդիկ թողեցին փռված լի սփռոցը և վազեցին հետիոտն: Նրանց հետևեցին բաղմաթիվ ուրիշները: Ընտանիքով եկածներն շտապ հավաքեցին իրենց իրերը, հանձնեցին իրենց կամ դրկցի տղայի պահպանությանը և շտապեցին քաղաք՝ կառք ճարելու: Սակայն ոչ ոք չէր ուզում մնալ՝ պահպանելու գորգերն ու ինքնաեռները, բարձերն ու ամանեղենը:

Մի քանի րոպեում այգուց դեպի քաղաք իջնող լանջը և ապա ներքևի փողոցը լցվեցին վազող, փոշու և քրտնքի մեջ կորած մարդկանց հեղեղով:

Եվ հանկարծ, դիմացից լսվեցին բաղմաթիվ սմբակների դոփյուններ, երևացին փրփրաբերան ու սանձակոտոր ձիերով կառքեր, կառքեր, կառքեր . . .

Կառքերն սկսեցին հասնել մարդկանց հեղեղին, անմիջապես լցվել բերնեբերան և, իսկույն շուռ գալով, սրընթաց անհետանալ փոշու և արևի մեջ . . . Զարմացած ոստիկանների շվար կերպարանքների մոտով դրանք ամեն վայրկյան փայլատակում էին և անցնում, կտրում քաղաքը հյուսիսից հարավ, ապա թեքվում էին դեպի բոստանների մեջտեղով անցնող ճանապարհը: Բոստանների պատերը սեղմում էին դրանց հեղեղը, հեղեղը կորցնում էր իր լայնությունը, բայց դառնում էր ավելի սրընթաց:

Սպառնալով կտոր-կտոր անել կառքերն ու մարդկանց, փրփրաբերան ձիերը խրտնած վազքով բարձրանում էին թուրքական թաղամասի լանջով՝ իրենց ետևից տանելով կառքերն ինչպես թեթև տաշեղներ: Օդի մեջ սուր շվոցով ֆշշում անցնում էին մտրակները, ինչպես հեռվից արձակած գնդակներ:

Հասնելով թաղամասի առաջին փողոցին, մարդկանցից ոմանք անհամբերությունից մթագնած ուղեղով ցած էին թռչում իրենց վազքը չդանդաղեցնող կառքերից՝ այդ կառքերից ավելի արագ տեղ հասնելու անմիտ ցանկությամբ:

Այնտեղ, որտեղ դեռ ուրբաթ օրը Հաբիբայի տունն ու պարտեզն էին, այժմ փռված էր հարթ և ընդարձակ մի հրապարակ: Հրապարակի չորս կողմերում կային չորս փողոցներ, որոնցով գալիս էին հրաշքի մոտիկությունից արդեն վարանած դանդաղընթաց կառքերը: Մարդիկ իջնում էին վար և ակնածանքով ու կամացուկ

մտնում հրապարակ:

Ոլինչ չկար: Հրապարակը դատարկ էր: Միայն դրա կենտրոնում գտնվում էր Հաբիբայի ավազանը: Սակայն այլևս շատրվան չկար դրա մեջ, և ջուր չէր ցայտում այնտեղից: Զիթողցոնց Զաբորի հավուզ-ախպուրի նման, ավազանի մի պռունգի վրա ուստան կառուցել էր աղբյուրաքար, որն այժմ կանգնած էր միակ մնացած ծառի ստվերում: Աղբյուրաքարից հոսող ջուրը սակայն, չէր հավաքվում ավազանում, այլ իր անկման տեղը մի փոքրիկ անցքով իսկույն իջնում էր գետնի տակ՝ ավազանի սալած հատակը թողնելով չոր: Ավազանի մյուս պռունգից, աղբյուրագլխի դիմացից, քարե մի քանի աստիճաններ իջնում էին ավազան:

Չորս կողմից, շարունակ և անընդհատ, գալիս էին վայրկյան առաջ հրաշքը տեսնելու ցանկությունից լոած ու սառած մարդիկ: Ավելի մոտենալու համար նրանք շարունակ սեղմում էին իրենց առջևում կանգնածներին, իսկ առջևում կանգնածներն անթարթ հայացքներն աղբյուրին հառած և հասկանալով, որ այնտեղ է հրաշքը, չէին վստահանում մոտենալ: Սակայն ամեն կողմից հորդում էին նորերը, ավելի համառ էին սեղմում ետևում կանգնածները: Առաջինները փոքրիկ և ակամա քայլերով մոտենում էին Հեղնար աղբյուրին . . .

Ի՞նչն էր այդտեղ հրաշքը . . .

Ետևից գալիս էին անվերջ, մարդկային օղակը Հեղնար աղբյուրի շուրջը սեղմվում էր ավելի և ավելի:

Առջևում գտնվող մարդկանցից մեկը հանկարծ ուշադիր նայեց աղբյուրի սև գլխաքարին և այնտեղ, խողովակի վերևում դրված կարմրաքանդակ շրջանակի մեջ, կարդաց .

«Ամմեն մե կնիկ իրան մարդու ախպուրն է, ուրիշ հեչ մեկմ իրավունք չունի խմելու էնոր ջրեն»:

Այժմ արդեն, ընդհուպ մոտեցած, կարդացին նաև ուրիշ շատերը և զարմացած, լուռ ու տարակուսանքով, նայեցին իրար: Մի՞թե այդ հասարակ և բոլորին պարտադիր օրենքի մեջ էր Հեղնար աղբյուրի հրաշքը . . .

Չբավարարված հետաքրքրությունից և չլուծված գաղտնիքից անհանգստացած, մոլոր պտտվում էին փոշոտված ու քրտնած մարդկանց հայացքները: Վերջապես նրանցից մեկը հոգնած մի հոգոց արձակելով, հանեց շափխան, թաշկինակով սրբեց ճակատը և Հեղնար աղբյուրի աստիճաններով իջավ ավազան՝ խողովակին մոտենալու և ջուր խմելու համար: Բայց հազիվ ոտքը վերջին աստիճանից ավազանի հատակին դրած, նա գունատվեց և երեսնիվայր տարածվելով աղբյուրի առջև, բացականչեց սարսափահար .

— Մեղա՛, մեղա՛ քեզի, տեր, ես սրբապղծութուն չէի ուզե էնե . . . Չիտեի, տեր, վենձ է քու հրաշքդ . . .

Զգարհուրած, բոլորը նայեցին խողովակին: Հազիվ մարդն ավազան իջած՝ ջուրը կտրվել էր: Բոլորը տեսան, թե ինչպես աստված ինքն իր հրաշքով հաստատեց ուստայի քանդակած խոսքերը, որ «Ամմեն մե կնիկ իրան մարդու ախպուրն է, ուրիշ հեչ մեկմ իրավունք չունի խմելու էնոր ջրեն»:

Մարդը դողացող ծնկներով, իր հազիվ չկատարած սրբապղծությունից սարսափահար, դուրս ելավ ավազանից: Հեղնար աղբյուրի անարատ ջուրն անմիջապես սկսեց նորից հոսել . . .

Ոչ ոք չէր համարձակվում կրկին ստուգել աստծու հրաշքը, սակայն ոչ ոք չէր ուզում նաև հավատալ իր աչքերին, որոնք բացվելուց ի վեր երբեք չէին տեսել ոչ մի հրաշք . . . Եվ ահա, վերջապես, մի ուրիշը վճռեց մտնել ավազան: Երբ ջուրը նորից կտրվեց, այդ մարդու հետ միասին ծունկ չոքեցին հրապարակում հավաքված բոլորը՝ թե հայ, թե հույն, թե թուրք, և միասին ծեծեցին իրենց կուրծքը .

Մեղա՛ . . . մեղա՛ . . . . մեղա՛ . . .

Մարդը վախից թուլացած իր ոտքերը հազիվ դուրս քաշեց հրաշք-աղբյուրից:

Գունատված շրթունքների կցկտուր շշուկներով լուրն անցավ ետևում կանգնածներին, որոնք չէին տեսնում ոչինչ: Նրանք սկսեցին անհամբեր և բորբոքված առաջ հրհրվել: Այս անգամ առաջինները հլու տեղի տվեցին նրանց,

որպեսզի նրանք ևս տեսնեին, բոլորը տեսնեին, թե ինչպես աստված գալիս է հաստատելու ընտանիքի սրբության հին օրենքը և դատապարտելու մարդկանց կողմից արդեն դատապարտված այն անառակին, որը զանց էր առել այդ . . .

Եվ նորից, շարունակ ավելի և ավելի մեծ տագնապով ու դողով, մարդիկ սկսեցին ստուգել աստծու հրաշքը՝ իջնելով ավազանի մեջ՝ թե սանդուղքներով և թե պատերից ցատկելով: Համոզվելով, որ ոչ ոքի չի տրված խմել Հեղնար աղբյուրի ջրից, նրանք հեռանում էին դեպի ետին շարքերն այն խոր զղջումով, որ հանդգնել էին միայն սեփական աչքերով հրաշքը տեսնելուց հետո հավատալ դրան . . . Նրանք որոշում էին հետևյալ իսկ կիրակի օրը զոհ մատուցել Գյումրու հռչակավոր Սուրբ Աստվածածին եկեղեցուն և զոհի արյունը եկեղեցու սրբատաշ պատին քսելով՝ քավել իրենց թերահավատության մեղքը . . .

Սարսափից չոված աչքերով մի կին, ավազանում չոքած, հայացքը դեպի ցամաք խողովակը դարձրած, մրմնջաց անլսելի .

— Ներե, տեր ասված, ներե ընձի, իմ մտքես էնպես է անցե, թե Հեղնարի մեղքն էնքան էլ վենձ չէ էղե . . .

Հավաքվածները նայում էին նրան ու թեև չէին լսում նրա խոսքերը, բայց տեսնում էին նրա զղջումը: Երբ նա դուրս ելավ ավազանից, նրա փոխարեն աղերսի իջավ մի տղամարդ, որը նույնպես իր հոգու խորքում շատ չէր մեղադրել Հեղնարի սիրեկանին . . . Եվ բոլոր նրանք, ովքեր ավազան էին իջնում մեղքի բեռն ուսերին, այնտեղից գուրս էին գալիս մաքրված, աղբյուրի ճակատի խոսքերն իրենց հոգու ամենախոր խորքում հավիտենապես դրոշմած . . .

Աղբյուրին մոտեցան և հերթով ավազան իջան Հեղնարի եղբայրը, ընկերուհին, ազգականները . . . Սակայն վայրկենապես ցամաքած խողովակի վերևից օրենքն ասում էր նրանց, որ ամուսնացած կնոջ տերն այլևս նրա ամուսինն է, և նրա վրա իրավունք չունի նույնիսկ ծնող մայրը, նույնիսկ հարազատ եղբայրը . . .

Սևաքար աղբյուրագլխի ճակատին, խողովակից բարձր, կարմիր քարի վրա քանդակված, քարացել էին ահեղ օրենքի խոսքերը: Եվ դրանց գերբնական հաստատմանն ի տես, բոլոր հավաքվածները նորից ծունկ չոքեցին:

Արևն իջավ: Այժմ դրա վերջալույսային ճառագայթները հավաքվածների վրա ընկան հեռվից և շեղակի: Չնայած անցել էր բավական ժամանակ, բայց դեռ ոչ ոք չէր հեռացել թաղամասից: Ընդհակառակը, ավելացել էին ուրիշ շատերը, եկել էին նվիրական Ախուրյանի ափից, այլ գբոսավայրերից, քամվել էին քաղաքից: Փողոցներն ու նորաբաց հրապարակը, որ դեռ քիչ առաջ մի կերպ տեղավորել էին հավաքվածների բազմությունը, այժմ անկարող էին ընդգրկել բոլորին: Այժմ թուրքական ամբողջ թաղամասն էր վերածվել հրաշալի ապացույցի առջև համրացած մարդկանց ծովի: Վխտացող բազմության կենտրոնում վճիտ ու խաղաղ հոսում էր ոչնչով աչքի չընկնող փոքրիկ աղբյուրի ջուրը: Սակայն իսկական մի հրաշք, տեսանելի և շոշափելի, մարդկային ձեռքի այդ պարզ կառուցվածքը դարձրել էր հրաշալի և սուրբ: Հավաքված բազմության բացարձակ լռությունն ապացույց էր, թե ինչ ակնածանք և վախ էր ներշնչել հրաշքը:

Եվ հանկարծ, ինչպես որոտ այդ լռության մեջ, թաղամասի հեռու ծայրից լսվեց մի խելագար ձայն, որն արագ մոտենում էր, կարծես մեկը փախչում էր սպանողների ձեռքից կամ ինքն էր արշավում՝ սպանելու:

Այդ եկվորի հանդեպ մարդկային ծովը ճեղքվում էր նրա մոտենալուց դեռ առաջ, կարծես թրով, և եկվորն անարգել վազում էր դեպի Հեղնար աղբյուրը: Թվում էր, թե նա մոլեգնաբար հայհոյում էր ամենահրեշավոր բառերով, սակայն անկարելի էր որևէ բան հասկանալ նրա անկապ բառերից:

Դեռ նախքան նրան տեսնելը մարդիկ զգացին՝ իրենք էլ չիմանալով, թե ինչից, որ նա Հեղնարի սիրեկանն է: Եվ նեղ միջանցքը մարդկանց միջև՝ բացվեց մինչև ուղղակի Հեղնար աղբյուր:

Ո՞ւրտեղ է, որոտաց աղաղակը, և երևաց Վարոսը: Ոչինչ չտեսնող իր հայացքը հածելով չորս կողմ, սարսափահար անելով մոտիկ կանգնածներին, որոնք ետ ընկրկեցին նրանից, նա նորից աղաղակեց, ո՞ւրտեղ է, ցուց տվեք, ես ձեր ծնողների, ես ձեր զավակների, ես ձեր . . . Վո՞վ կրսե, թե ամմեն մե կնիկ իրան

մարդու ախպուրն է . . . Սերն է տերը, ոնչ թե պսակված մարդը . . . Ցուց տվեք ախպուրը . . . Ե՛ս պիտի խմեմ էնոր ջրեն՝ մինչի կշտանամ . . . Իմս է սերն էլ, ջուրն էլ . . . Սերն ասսանից է, սերն է իրավունքը . . .

Գզգզված, փոշոտված, քրտնած, ծանր հևալով, նա նորից կատաղած նայեց աջ ու ձախ: Թվում էր, թե ահա պիտի հարձակվի մեկնումեկի վրա և խեղդի: Մարդիկ ընկրկեցին, և նրա առջևի արահետը վերածվեց պողոտայի:

Միայն այժմ նկատելով աղբյուրը, Վարոսը նետվեց դեպի այն: Հասնելով ավազանի պռունգին, նա կանգ առավ, մի վայրկյան նայեց աղբյուրի ջրին, կարդաց գիրը, ապա վստահ քայլերով մտավ ավազան:

Ինչպես բոլորի, նրա առաջ ևս, ջուրը կտրվեց:

— Հեղնա՛ր, բացականչեց Վարոսը:

Հրապարակով սարսուռ անցավ:

Ես եմ, ազիզ,— պոռթկաց ծանր ճիչը Վարոսի շանթահար կրծքից,— չե՞ս ճանչե ընձի . . .

Ցամաքած աղբյուրի խողովակից ընկավ վերջին կաթիլը: Վարոսը տարտամ շոյեց ճակատը և շարունակեց անթարթ նայել աղբյուրին: Նա կարծես չէր կարողանում ըմբռնել, որ կատարվեց անհավատալին, որ աստված ինքն իր բացորոշ հրաշքով մերժեց սիրո իրավունքը և հաստատեց ընտանիքի սրբությունը . . .

— Յա՛, բացականչեց Վարոսը՝ հանկարծ ցնցվելով ահից, ջուրը ցամքավ . . .

Նա շվար հայացքը հածեց շուրջը՝ կարծես օգնություն հայցելով, բայց մարդիկ նայում էին առանց արտահայտության և անկարեկից: Վարոսը զարմացավ, որ ոչ ոք տեղից չի շարժվում, ոչ ոք քար չի բարձրացնում գետնից՝ նրան սպանելու: Այդ նրա համար ավելի լավ կլիներ, քան բութ անշարժությունը . . .

Վարոսը նայեց աղբյուրին, սանդուղքի վերջին աստիճանի մոտից անհաստատ քայլերով մի կերպ կտրեց մինչև աղբյուրագլուխն ընկած երկու քայլը, ձեռքը դրեց փայլուն խողովակի վրա և սկսեց անիմաստ շոյել մետաղը: Ապա հանկարծ, թե բոլորի համար անսպասելի, թե իր, ընկավ ծնկաչոք և գոռաց .

— Մեղա՛ քեզի, տեր, մեղա՛ քեղի, Հեղնար . . .

Նրա ձայնը մի մեծ մտրակի շրմփոցով խփվեց հավաքվածների բազմությանը և անցավ:

— Մեղա՛ քեզի, տեր, կրկնեց Վարոսը և ձեռքը տանելով դեպի օձիքը, պատռեց, վար քաշեց վերնաշապիկն ու ներքնաշապիկը: Մեղա քեզի՝ քու սխալված հողածնիցդ: Ես էնպես գիտեի, թե դուն իրավունքը սիրուն կուտաս, մեղա քեղի, ասպա՛ծ . . .

Նա բռունցքներով ծեծեց իր մերկ կուրծքը: Պատառոտված հագուստի ծվենները ճոճվեցին անօգնական:

— Մեղա՛ քեզի, Հեղնար, պատճառը ես եղա, օր դուն հոգով-մարմնով կորիս . . . Մեղա՛ քեզի, ազիզ, որ մարմինդ էս պզտի ջրի տակն է, հոգիդ էն վենձ կրակի վրա . . .

Ապա ոտքի կանգնելով, գլուխը բաց, կուրծքը բաց, նա ետ նետվեց ցամաքած խողովակից:

Թողութո՛ւն էղնի, քեզի, Հեղնար, օր իմ դժողքային սերս ընդունեցիր: Թողութո՛ւն էղնի քեզի, ազիզ, օր մե գիշերմ էկար ու մարդասպանութան գործն ընձի սորվեցուցիր . . . .

Ապա նորից առաջ նետվելով ու տագնապած համբուրելով ցամաք աղբյուրի փայլուն խողովակը, նա կերկերաց .

Ես բոբլիկ ոտքով Երուսաղեմ կէրթամ, Հեղնար, ես Քրիստոսի գերեզմընեն թողութուն կխնդրեմ իմ ու քու էրած չէնելիքի համար . . .

Ոտքերից արագ-արագ հանելով ոտնամաններն ու գուլպաները և շպրտելով մի կողմ, նա շուռ եկավ և դուրս ելավ ավազանից՝ անմիջապես իր քայլերն ուղղելու համար դեպի սրբազան քաղաքի աներևակայելի հեռուն: Բայց Երանոսի միջնեկ եղբայր Գեղամը, արյունով և ապա օղիով թաթախված դանակը ձեռքին, կտրեց նրա առաջը .

— Կեցի՛ . . . Քու Երուսաղեմդ էնքան էլ հեռու չէ . . .

Վարոսը կանգ առավ և առանց դիմադրելու, բայց և առանց հպարտության, իր մերկ կուրծքը դեմ արեց վրիժառուին: Գեղամը բարձրացրեց դանակը՝ ուժգին թափով իջեցնելու համար, բայց նույն րոպեին հայրական մի ձեռք ետևից բռնեց նրա թևը:

Մի՛ էնե, օղուլ, իր խաղաղ ձայնով խրատեց չգիտես որտեղից հանկարծակի հայտնված ուստան:— Թող էրթա: Ասսու քաղաքն էրթլցողի ճամբեն չեն կտրե . . .

Ապա, ճանաչելով երիտասարդի ձեռքում բռնած դանակը, նա տխուր ժպտաց և, կարծես ափսոսանքով, օրորեց գլուխը .

— Քեզի չե՞մ ըսե, օղուլ, օր էդ դանակն իրան ամմեն չարութունը դարտըկել է, էդոր մեջ մեննակ բարին է մնացե: Էդ դանակով մարդ չի սըպանվի . . . Եվ ապա դառնալով դեպի Վարոսը, ձեռքով արեց՝ գնա . . .

Վարոսը գնաց:

Երբ նրա կորաքամակ, կարծես ծերացած, գլխաբաց ու բոբիկ, կիսամերկ ու փոչոտ կերպարանքն անհետացավ, ուստան խաչակնքեց իրեն, դանդաղ քայլերով իջավ ավազան, մոտեցավ խողովակին և բոլորի աչքի առաջ խմեց Հեղնար աղբյուրի ջուրը . . . Խմեց, հանեց շափխան, ետ տարավ արխալուղի փեշը, վերցրեց գոտուց կախված և իր ծայրով համարյա գետնին քսվող մեծ, վառ-կարմիր թաշկինակը, սրբեց իր պայծառ ճակատի վրայից քրտնքի մարգարիտները և մի անգամ ևս նայելով հոսող անապակ ջրին, նույն դանդաղ քայլերով դուրս ելավ ավազանից և գնաց . . .

Բոլորը նայեցին նրա ետևից և տեսան, թե ինչպես խաղաղ ու վեհ էր հեռանում բարձրահասակ, նեղիրան ուստան՝ աղբյուրների հոչակավոր վարպետը . . .

Եվ երբ նրա հեռանալուց հետո բոլորը միանգամից նորից շուռ եկան դեպի Հեղնար աղբյուրը՝ հրաշքը վերացել էր իսպառ, և ջուրը ցամաքել էր ընդմիշտ . . .

7

Եկավ քրեական ու բժշկական քննությունը և տեսնելով բոլորովին անջուր մի աղբյուր, պատահած դեպքն արձանագրեց իբրև անհասկանալի պատճառներից դրդված թյուրատեսություն:

8

Եվ մնաց մի սովորույթ: Փողոցներում, թե տներում, խնջույքի, թե աշխատանքի ժամանակ, աղբյուրների հոչակավոր վարպետին բարևելուց հետո գյումրեցիները մի պահ նայում էին նրա ետևից և մրմնջում .

— Պայծառ մնաս, ուստա Մկրտիչ . . .